Ի բազմաց բաղում անգամ ազդ եղև մեզ զքաջութեանց քոց, բայց արդ իբր ականատես իսկ եղեալ մեր զձերոց մեծամեծ քաջութեանց՝ որ ընդդէմ թշնամեացն մերոց, ահա՝ արդ կացուցի զքեզ իշխան և գլուխ ամենայն իշխանաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ, և երկիրդ Ղափան՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի. բայց դու ելցես և ժողովեսցես առ քեզ զամենայն զօրս և զխանս ի կողմանցդ յայդոսիկ և ի բաց հանցես զօսմանցին ի սահմանաց քոց»[28]։

Հետևում է նախնական գրառման մեջ հիշված նվերների թվարկումը, նշելով դրամահատման իրավունքի մասին, ինչպես նաև այն մասին, որ «եկին հնազանդեցան նմա (Դավթին) իշխանք և զաւառապետքն Թուրքաց»[29]։

Ինչպես ժամանակակիցների, այնպես էլ հետագա պատմագիրների կողմից շահ Թահմասպի 1722—1732 թթ. գահակալությունը իրավացիորեն գնահատված է որպես քաղաքական և ռազմական հենարանից զուրկ, աստանդական վիճակում գտնվող, անկայուն մի իշխանություն։ Եթե մինչև 1727 թ., երբ Նադիրը, իրեն վերանվանելով «Թահմասպկուլի», իր ղեկավարած շարժման նպատակն էր համարում Սեֆեվիների գահի վերականգնումը, այդ իշխանությունը դեռ որոշ կշիռ ուներ, ապա այնուհետև, երբ ձեռք բերած հաղթանակների շնորհիվ բարձրացավ Նադիրի հեղինակությունը, որպես օտար նվաճողների դեմ երկրում ծավալված պայքարի միակ ղեկավարի, Թահմասպը լիովին հեղինակազրկված էր, ուստի և նրա արձակած հրովարտակներն ու հրահանգները, մեծ մասամբ, գործնական հետևանքներ չէին ունենում։ Անհաջող ընդհարումները օսմանցիների հետ ավելի քան թուլացրին նրա դիրքերը, որից հետո գրության տերը փաստորեն Նադիրն էր։

Մենք արդեն տեսանք, որ 1727 թ. հունվարին սիփահսալար Մուհամադ-Ռիզա խան Աբդալլուին հղված հրովարտակը, որով կարգադրվում էր օգնություն ցույց տալ Դավիթ-բեկին, ոչ մի հետևանք չունեցավ և անհավասար պայքարում հայ մարտիկները, փոքրաթիվ ուժերով կարողացան պարտության մատնել օսմանցիներին և դուրս քշել Ղափանի սահմաններից։ Հաղթանակի լուրն ստանալուց հետո Դավիթ-բեկին շնորհված հրովարտակով էլ թեև տեղի ադրբեջանական խաներին կարգադրված էր ենթարկվել Դավիթ-բեկին, սակայն դրանք մեծ մասամբ հնազանդվել էին օսմանցիներին և օգնում էին նրանց՝ Դավիթ-բեկի դեմ մղված կռիվներում, իսկ Դուզալի Քյազում-խանի մասնակի համագործակցությունը Դավիթ-բեկի հետ և մասնակցությունը հետագա կռիվներին, ինչպես տեսանք, ձևական բնույթ էր կրում. երբ ձեռք բերած հաջողություններից գոտեպնդված Դավիթ-բեկը, հետապնդելով օսմանցիներին, մուտք գործեց Ագուլիս, այստեղ առավել ևս հաստատվեց, թե որքան սնամեջ և ապարդյուն կարող էին լինել քաղաքականապես սնանկ գահի հավակնորդի արձակած հրահանգները։

Նկարագրելով օսմանցիների դեմ Ագուլիսում մղված կռիվները, Տեր-Ավետիսը, առանց անունները նշելու, խոսում է նաև շահի հրահանգով օգնության եկած խաների մասին. «Ապա յետ այսորիկ արքայն Պարսից Շահ Թամաս առաքեաց յօգնութիւն Դաւթի զերիս խանս, և վերստին դիմեաց օսմանցին և խորտակեցաւ ի սոցանէ։ Սակայն իշխանքն Ագուլէսի ծածկապէս դաշնադիր էին ընդ օսմանցոց, և սոքա ոչ գիտէին»[30]։ Այնուհետև հաջորդ ճակատամարտի նկարագրության մեջ նշված է, որ օսմանցոց դեմ Դավիթը թևերից մեկում նշանակում է օգնության եկած խաներին, մյուսում Տեր-Ավետիսին, իսկ ինքը գլխավոր ուժերով ամրանում է ճակատի կենտրոնական մասում։ Եվ ահա թշնամու առաջին իսկ հարձակումից խաները լքում են դիրքերն ու փախուստի դիմում, ծանր կացության մեջ դնելով Դավիթ-բեկին։ Սակայն,

28 Նույն տեղում, էջ 173—174։

29 Նույն տեղում, էջ 174։

30 Նույն տեղում, էջ 140։